ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 31.07.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/170

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Մասնակից՝ «Փարվանա» ԱԿ

Մասնակցությամբ՝
«Փարվանա» ԱԿ-ի տնօրեն՝ Գ. Բեյբությանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/88» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների (Երեվանի թիվ 105, Երևանի թիվ 94, Վանաձորի թիվ 17, Գյումրու թիվ 26, Տաշիրի, Իջևանի ավագ դպրոցներ) ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 10.07.2020թ.-ի թիվ 26/26-1/10354-2020 գրությամբ «Փարվանա» ԱԿ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 07.07.2020թ. թիվ 04.1/31.2/17174-20 գրության հիման վրա, 10.07.2020թ.-ին «Փարվանա» ԱԿ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 10.07.2020թ.-ին:

13.07.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/170 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

22.07.2020թ.-ին և 31.07.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 22.07.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 31.07.2020թ.-ին:

2. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը 07.07.2020թ. թիվ 04.1/31.2/17174-20 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ նախարարության կողմից 2020 թվականի հունիսի 17-ին գնանշման հարցման ընթացակարգով «ՀՀԿԳՄՄՆԳՀԱՇՁԲ-20/88» ծածկագրով կազմակերպված կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների գնման գործընթացին 4-րդ չափաբաժնի համար հայտ է ներկայացրել «Փարվանա» ԱԿ-ն: Հաշվի առնելով, որ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված չեն հրավերի

պահանջներին համապատասխան՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գնահատման գործընթացը կասեցվել է և 2020 թվականի հունիսի 26-ին առաջարկվել է «Փարվանա» ԱԿ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, սակայն դրանք չեն շտկվել և վերջինիս հայտը մերժվել է:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/88» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Փարվանա» ԱԿ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Փարվանա» ԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 14.07.2020թ.-ին գրությամբ դիմել է «Փարվանա» ԱԿ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.07.2020թ.-ի թիվ 26/26-1/10354-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստի տեղի, օրվա և ժամի մասին՝ ներկայացել է հրավիրված նիստերին:

Ներկայացնելով գրավոր դիրքորոշում Մասնակիցը հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Փարվանա» ԱԿ-ն ԿԳՄՍ նախարարության կողմից 2020 թվականի հունիսի 17-ին գնանշման հարցման ընթացակարգով «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/88» ծածկագրով կազմակերպված կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների գնման գործընթացին 4-րդ չափաբաժնի համար հայտ է ներկայացրել: Մեր կողմից ներկայացված փաստաթղթերում եղել են թերություններ՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գնահատման գործընթացը կասեցվել է և 2020 թվականի հունիսի 26-ին առաջարկվել է «Փարվանա» ԱԿ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, սակայն տեխնիկական խնդիրների պատճառով մենք չենք տեսել ծանուցումը, որի հետևանքով թերությունները շտկվել և ուղարկվել են նշված ժամկետից ուշ:

ԿԳՄՍ նախարարության կողմից ներկայացվել է հայտ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի ա և գ մասերի հիման վրա «Փարվանա» ԱԿ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, սակայն պետք է հայտնենք, որ մենք չենք հրաժարվում մեր պարտավորություններից և գնման գործընթացին հետագա մասնակցությունից:»:

4. <u>ՍՑ-LO-2020/170 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների (Երեվանի թիվ 105, Երևանի թիվ 94, Վանաձորի թիվ 17, Գյումրու թիվ 26, Տաշիրի, Իջևանի ավագ դպրոցներ) ձեռքբերման նպատակով 09.06.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/88» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով 4-րդ չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել նաև «Փարվանա» ԱԿ-ն:

iii. «Փարվանա» ԱԿ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 26.06.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 7.5 կետի համաձայն՝ «Փարվանա» ԱԿ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- Հավելված 1-ում բացակայում է իրական շահառու հանդիսացող անձի նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը,
- ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, բացակայում են 5-րդ բաժնի ամբողջ և 6-րդ բաժնի մի մասի աշխատանքների ծավալները, ինչի արդյունքում հնարավոր չէ պարզել ըստ աշխատանքների բաժինների համար ներկայացված առավելագույն կշիռների շեղումը:

v. Նույն արձանագրության 8.1 կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և ծանուցել է Մասնակցին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ:

vi. Հանձնաժողովի 30.06.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 9.2 կետի համաձայն՝ «Փարվանա» ԱԿ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել շտկված փաստաթղթերը:

vii. Հանձնաժողովի 02.07.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 12.6 կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով սույն արձանագրության 9.2 կետը, «Փարվանա» ԱԿ-ի հայտը գնահատել է անբավարար և մերժել՝ հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.07.2020թ.-ի թիվ 26/26-1/10354-2020 գրությամբ «Փարվանա» ԱԿ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ (21.05.2020թ.-ի թիվ 778-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի առաջարկած ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Հրավերի 4.3-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով սույն հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել սույն հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տաս տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ

աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների (Երեվանի թիվ 105, Երևանի թիվ 94, Վանաձորի թիվ 17, Գյումրու թիվ 26, Տաշիրի, Իջևանի ավագ դպրոցներ) ձեռքբերման նպատակով 09.06.2020թ.-ին հայտարարված «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/88» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով 4-րդ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած «Փարվանա» ԱԿ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են եղել անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Հավելված 1-ում բացակայում է իրական շահառու հանդիսացող անձի նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը, ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, բացակայում են 5-րդ բաժնի ամբողջ և 6-րդ բաժնի մի մասի աշխատանքների ծավալները, ինչի արդյունքում հնարավոր չէ պարզել ըստ աշխատանքների բաժինների համար ներկայացված առավելագույն կշիռների շեղումը:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և ծանուցել է Մասնակցին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունների շտկում չի ներկայացվել, ինչով պայմանավորված՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, գնահատել է անբավարար և մերժել «Փարվանա» ԱԿ-ի հայտը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխա-նություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Փարվանա» ԱԿ-ն, ներկայացնելով հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտ, Պատվիրատուի կողմից Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերով սահմանված ժամանակահատվածում, չշտկելով արձանագրված անհամապատասխա-նությունները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.07.2020թ.-ի թիվ 26/26-1/10354-2020 գրությամբ «Փարվանա» ԱԿ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2020/170 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Փարվանա» ԱԿ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ